18.02.2019թ. ք. Երևան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 024757/06-Վ

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 24757 գործը և ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ 18.02.2019 թվականի թիվ 24757 արձանագրությունը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Անհատ ձեռնարկատեր Դավիթ Խաչատրյանը (ՀՎՀՀ՝ 35106389, հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Նորագավիթ 4փ. 41) ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2018թ. սեպտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվարկը, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասով:

Վարչական վարույթի շրջանակներում Դավիթ Խաչատրյանին հասցեագրվել է ծանուցագիր՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը և գործի քննությանը մասնակցելու վերաբերյալ: Նկատի ունենալով, որ ծանուցագիրը ստանալու վերաբերյալ հավաստող ապացույց առկա չէ, ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 19.12.2018 թվականին կայացվել է վարչական վարույթը կասեցնելու մասին թիվ 024757/06 որոշումը՝ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի:

Փոստային ծառայության միջոցով հետադարձ ծանուցմամբ Դավիթ Խաչատրյանին կրկին ծանուցագիր է ուղարկվել՝ 18.01.2019թ-ին, ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչություն ներկայանալու, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու վերաբերյալ: Փոստային ծառայությունից նշված առաքանու վերաբերյալ ծանուցագիրը կողմը ստացել է 23.01.2019թ-ին:

Կողմը պատշաճ ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին՝ չի ներկայացել: Գործի քննության ընթացքում հայտնի է դարձել, որ Անհատ ձեռնարկատեր Դավիթ Խաչատրյանի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել 2018թ. հոկտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվարկը, որի վերաբերյալ ծանուցագիր է ուղարկվել կողմին, սակայն ծրարը ետ է վերադարձվել չպահանջված նշագրումով, ուստի ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 17.01.2019 թվականին կայացվել է վարչական վարույթը կասեցնելու մասին թիվ 001129/06 որոշումը՝ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի, ինչպես նաև Դավիթ Խաչատրյանի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել 2018թ-ի դեկտեմբեր ամսվա հսկիչ դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկությունները և 2018թ-ի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների եկամտային հարկի հաշվարկները:

Այն փաստը, որ Դավիթ Խաչատրյանը վերջին մեկ տարվա ընթացքում կատարել է իրավախախտում, որի համար ենթարկվել է վարչական տույժի (ՀՀ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետի 29.08.2018թ-ի թիվ 379658/06 որոշում), սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 34, 244[2], 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Դավիթ Խաչատրյանի վերաբերյալ հարուցված թիվ 24757 և 1129 վարչական վարույթները վերսկսել:
2. Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի՝ Դավիթ Խաչատրյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 20.000 (քսան հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն.Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝
Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն հանձնելուց հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարներին **900005240487՝** տուգանքի **70%**, **900013000246՝** տուգանքի **30%** վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:
Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:
Մասնանեսեի գործի քննությանն, որոշման մեղաբերյալ առարկություններ չունեմ: